

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2016

Պատասխաններ

10 -րդ դասարան

Ա.

1. սաղավարտ

1. (պատմական) Մետաղյա գլխաման՝ սառը զենքի հարվածներից պաշտպանվելու համար:
2. (ռազմական) Հատուկ ձևի մետաղյա գլխարկ, որ պատում է զլուխն ու ծոծրակը:
3. Գլուխը հարվածից, ճնշումից, վնասվածքներից պաշտպանելու հատուկ ձևի (սովորաբար մետաղյա) գլխանոց :
4. (հնացած) Խույր:

վահան

1. (պատմական) Ռազմիկի ձեռքի պաշտպանողական զենք՝ սովորաբար մետաղից կամ փայտից (նաև կաշվից)՝ սառը զենքի հարվածից պաշտպանվելու համար:
2. (ռազմական) Մետաղյա թերթերից կամ տախտակներից պատրաստված հարմարանք՝ կրակային միջոցները պաշտպանելու համար:

երասան

1. Զույգ առասան, փոկ, որ կապում են ձիու սանձի երկու կողմից՝ ձեռքով բռնելու և ձիուն կառավարելու համար:
2. (փոխաբերական) Սանձ, պախուրց:
3. (փոխաբերական) Զսպիչ, կարգապահական միջոց, հսկողություն:

2. **նժույգ** - հեծնելու ընտիր ձի
զամբիկ - էգ ձի (մատակ)
հովաստակ - արու ձի
աշխետ - դեղնավուն, կարմիր, բոցագույն ձի

3. **Հելլադա**-հելլենուհի, հելլենիզմ, հելլենիստական

4. **կույտ** - շեղջ
շեղբ - սայր
գիրթ - ընդոստ

5. Աքիլլեսյան գարշապար

Նշակում է ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի խոցելի, ցավոտ տեղ, թուլություն, մաս, որն անպաշտպան է, խեղճ է:

Տրոյական պատերազմի ժամանակ թշնամու զինվորը, ուղեցույց ստանալով Աքիլլեսի թուլությունն իմացողից, իր նետն ուղղեց նրա անպաշտպան գարշապարին՝ միակ տեղին, որը հնարավոր էր խոցել: Վերքը մահացու էր...

Բ Կա՛մ վահանով, կա՛մ վահանին

Կա՛մ հաղթանակած , կա՛մ պարտված (զոհված)

Պլուտարքոսը «Լակեդեմոնուհիների ասույթները» երկում վկայում է, որ սպարտուհի Գորգոն իր որդուն վահան է տվել և վերևի խոսքով կովի ուղարկել: Հին հույների հաղթանակած զինվորը վահանով էր վերադառնում, զոհվածը՝ վահանի վրա դրված: